ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՔՐԻՍՏԻՆԵ ՌԱԶՄԻԿԻ ԱՐՇԱԿՅԱՆ

ՍՏԱՐՏԱՓՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԱՐԴԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Ը.00.02 - «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝	Տնտեսագիտության թեկնածու, պրոֆեսոր ԱՄԱԼՅԱ ՍԱՐԻԲԵԿԻ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր ՎԱՀՐԱՄ ԳԵՎՈՐԳԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
	Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ ԱՏՈՄ ՇԱՎԱՐՇԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ
Առաջատար կազմակերպություն՝	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2024 թվականի հունիսի 7-ին, ժամը 13:30-ին Երևանի պետական համալսարանում (0025, ք. Երևան, Աբովյան փ. 52) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 015 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2024 թվականի մայիսի 2-ին

015 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Հակոբջանյան Աննա Հովիկի

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ստարտափ ընկերությունները, ունենալով կարճ ժամանակահատվածում արագ աճ գրանցելու, աշխատատեղեր ստեղծելու և խոշոր ընկերությունների վերածվելու ունակություն, հանդիսանում են ժամանակակից տնտեսության շարժիչ ուժը: Արագ աճի հնարավորությունը պայմանավորված է ստարտափ ընկերությունների ապրանքների և ծառայությունների նորարարական բնույթով, ինչը աշխատանքի արտադրողականության բարձրացման և մրցունակության ապահովման կարևոր գործոն է: Ստարտափ ընկերությունները նպաստում են նաև զբաղվածության աճին՝ ստեղծելով աշխատատեղեր ոչ միայն ուղղակիորեն, այլև խթանելով մրցակցությունն այլ ոլորտներում և անուղղակիորեն նպաստելով այդ ոլորտներում նոր աշխատատեղերի ստեղծմանը:

Սակայն պայմանավորված նորարարությունների ռիսկայնությամբ և ստարտափ ընկերությունների գործունեությանն ուղեկցող անորոշություններով՝ մեծանում է այս ընկերությունների ձախողման հավանականությունը: Ձախողումներից խուսափելու և ստարտափ ընկերությունների կայուն զարգացմանը նպաստող միջավայր ապահովելու համար կարևոր է ուսումնասիրել և վեր հանել ստարտափ ընկերությունների զարգացման խնդիրները և գտնել դրանց լուծման ուղիները:

Ուսումնասիրությունների արդյունքում բացահայտվել են ստարտափ ընկերությունների զարգացման այնպիսի խոչընդոտներ, որոնք բնորոշ են ստարտափ ընկերությունների մեծ մասին, օրինակ՝ ռեսուրսների սահմանափակությունը, շուկայի պահանջարկի անորոշությունը, օրենսդրական բացերը, որակյալ կադրերի պակասը, ֆինանսավորման սղությունը, մրցակցության հաղթահարումը և այլն: Հաշվի առնելով հայկական ստարտափ էկոհամակարգի և գործարար միջավայրի առանձնահատկությունները՝ անհրաժեշտություն է առաջանում վերլուծելու տեղական էկոհամակարգի արդյունավետությունը և հասկանալու հայկական ստարտափ ընկերությունների զարգացմանը խոչընդոտող խնդիրները:

Հայկական ստարտափ ընկերությունները թեև որոշակի հաջողություններ են գրանցել միջազգային մակարդակում, սակայն դեռևս չունեն լուրջ առաջընթաց: Հայկական ստարտափ էկոհամակարգն, ի տարբերություն այլ զարգացած էկոհամակարգերի, չի կարողանում արդյունավետորեն նպաստել ստարտափ ընկերությունների զարգացմանը, մասնավորապես՝ տեղական էկոհամակարգում ներկայացված չեն խոշոր միջազգային վենչուրային ֆոնդեր, սակավաթիվ են վերազգային ընկերությունների ներկայացուցչությունները և գիտահետազոտական կենտրոնները, բավարար չեն ստարտափ ձեռներեցության ոլորտին առնչվող կրթական նախաձեռնությունները:

Հարկ է նշել, որ ստարտափ ընկերությունների և ստարտափ էկոհամակարգերի խնդիրներին նվիրված օտարերկրյա հեղինակների աշխատությունները բազմաթիվ են, մինչդեռ Հայաստանում ստարտափ ընկերությունների խնդիրներին անդրադարձող շատ հետազոտություններ չկան: Առկա հետազոտությունները հիմնականում վերաբերում են ՀՀ տեխնոլոգիական ոլորտին՝ ներկայացնելով ընդհանուր վիճակագրական տվյալներ ՏՏ և ճարտարագիտական ոլորտների վերաբերյալ՝ չառանձնացնելով ստարտափ ընկերություններին: Բացի այդ, նշված հետազոտու-

թյուններում ներկայացվում են տվյալներ հիմնականում տեխնոլոգիական ոլորտի ստարտափ ընկերությունների մասին՝ չներառելով ոչ տեխնոլոգիական ստարտափ ընկերություններին: Այսինքն՝ հայկական ստարտափ ընկերությունների և ստարտափ էկոհամակարգի խնդիրները դեռևս մեթոդաբանորեն և գործնականորեն բավականաչափ ուսումնասիրված չեն:

Հայաստանում ստարտափ ոլորտի զարգացման առանձնահատկությունների և խնդիրների ուսումնասիրությունը հնարավորություն կտա ստարտափ էկոհամակարգի զարգացումը խթանող համապատասխան քաղաքականություններ մշակել, որոնց միջոցով կարելի է խուսափել առաջացող խոչընդոտներից և ապահովել ստարտափ ձեռներեցության լայն տարածումը երկրում:

Կատարված դիտարկումները հիմնավորում են հետազոտության թեմայի արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը հայկական ստարտափ ընկերությունների խնդիրների բացահայտումն է և դրանց լուծումների առաջադրումը: Նշված նպատակի իրագործման համար հետազոտության հիմքում դրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ստարտափ ձեռնարկատիրության և ստարտափ ընկերությունների վերաբերյալ տեսական հայեցակարգերը, հստակեցնել ստարտափ ընկերության սահմանումը, բացահայտել ստարտափ ընկերությունների առանձնահատկությունները, զարգացման փուլերը, ստարտափ էկոհամակարգերի նշանակությունը, բաղադրիչներն ու դրանց ազդեցությունը ստարտափ ընկերության գործունեության և զարգացման վրա,
- ուսումնասիրել ստարտափ ընկերությունների դերը տնտեսության զարգացման գործում,
- ուսումնասիրել ստարտափ ընկերությունների զարգացման միտումները, կատարել միջազգային փորձի գնահատում,
- վերլուծել Հայաստանի Հանրապետության ստարտափ էկոհամակարգի ներկա վիճակը, կատարել պետական քաղաքականության, իրավաօրենսդրական դաշտի և ստարտափ էկոհամակարգի բաղադրիչների ազդեցության գնահատում հայկական ստարտափ ընկերությունների զարգացման վրա,
- ՀՀ-ում հիմնադրված և գործող ստարտափ ընկերությունների հարցման արդյունքում ստացված տվյալների վերլուծության հիման վրա բացահայտել և վերլուծել գործող ստարտափ ընկերությունների մոտ առկա խնդիրները,
- մշակել բացահայտված խնդիրների լուծմանն ուղղված համապատասխան առաջարկություններ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են հանդիսանում Հայաստանի ստարտափ ընկերությունները և ստարտափ էկոհամակարգը, ինչպես նաև ստարտափ ձեռներեցության ոլորտին առնչվող գործընթացները:

Հետազոտության առարկան են Հայաստանի ստարտափ ընկերությունների խնդիրները, դրանց բացահայտումը և լուծման ուղիները:

Ատենախոսության տեսական, մեթոդաբանական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել օտարերկրյա, ինչպես նաև հայրենական հեղինակների գիտական աշխատանքներն ու հրապարակումները հետազոտության թեմայի վերաբերյալ: Տեղեկատվական հիմք են հանդիսացել ոլորտին առնչվող ՀՀ օրենքները, ՀՀ վիճակագրական կոմիտեի, Հայաստանում ստարտափ ընկերությունների զարգացման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների և ստարտափ ձեռներեցության ոլորտը լուսաբանող մեդիա-կայքերի տեղեկությունները, միջազգային կազմակերպությունների նյութերն ու զեկույցները:

Աշխատանքում կիրառվել են հետազոտության թեմայի շրջանակում ստարտափ ընկերություններին առնչվող տեսական և կիրառական հիմունքների վերլուծության, հարցումների իրականացման և դրանց տվյալների համակարգչային մշակման մեթոդներ:

Ատենախոսության գիտական նորույթը և արդյունքները: Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն ունեն տեսական և գործնական նշանակություն, որոնց գիտական նորույթը կայանում է հետևյալում.

1. Հայկական ստարտափ էկոհամակարգի համակողմանի ուսումնասիրության արդյունքում գնահատվել է էկոհամակարգի հասունության մակարդակը. այն համապատասխանում է էկոհամակարգի հասունության չորս մակարդակներից առաջին՝ *M1 ձևավորվող* մակարդակին: Գնահատվել են էկոհամակարգի հասունության հաջորդ մակարդակ անցման հնարավորությունները և մոտեցումները:
2. Հաշվարկների արդյունքում հիմնավորվել է ներդրումային գործարքներում պետության և օտարերկրյա վենչուրային ֆոնդերի համատեղ մասնակցության, ինչպես նաև ներդրում ստացող ստարտափ ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրման արդյունավետությունը: Հաշվարկվել է պետության և մասնավոր վենչուրային ֆոնդի մասնակցության այնպիսի տոկոսային հարաբերակցություն, որի պայմաններում ապահովվում է շահութաբերության առավել բարձր մակարդակ և ոչ ֆինանսական օգուտներ՝ երկարաժամկետ հատվածում:
3. Հայկական ստարտափ ընկերությունների հարցման տվյալների վերլուծության արդյունքում վեր են հանվել ստարտափ ընկերություններին և ստարտափ էկոհամակարգի զարգացմանը խոչընդոտող խնդիրների գերակայությունները՝ ըստ էկոհամակարգի բովանդակային ուղղությունների:
4. Հարցման տվյալների կոռելյացիոն և գործոնային վերլուծության արդյունքում բացահայտվել են ստարտափ ընկերությունների զարգացմանը խոչընդոտող խնդիրների փոխադարձ ազդեցությունները, և խմբավորվել են ամենամեծ գործոնային ազդեցությամբ տարրերը՝ վեր հանելով ազդեցության հիմնական գործոնները:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Հայաստանի ստարտափ ընկերությունների խնդիրների բացահայտման և դրանց լուծման ուղղությամբ

ատենախոսությունում իրականացված ուսումնասիրության արդյունքները և մշակված առաջարկությունները գործնական նշանակության առումով կարող են օգտակար լինել թեմային նվիրված ուսումնական դասընթացների կազմակերպման, ատենախոսության մեջ առաջադրված խնդիրների հետազոտությամբ զբաղվող համապատասխան մասնագետների, ասպիրանտների և ուսանողների համար, ինչպես նաև՝ օգտագործվել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության, ՀՀ էկոնոմիկայի նախարարությունների կողմից՝ ստարտափ ձեռներեցության ոլորտի պետական քաղաքականության բարելավմանն ուղղված ծրագրերի մշակման նպատակով:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Ատենախոսության մի շարք դրույթներ և հիմնական արդյունքները հեղինակի կողմից ներկայացվել են Երևանի պետական համալսարանի գործարարության և կառավարման ամբիոնի նիստում:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլվել են տարբեր գիտական հանդեսներում հեղինակի կողմից հրատարակված 6 գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսության կառուցվածքը պայմանավորված է աշխատության հիմնական նպատակով և առաջադրված խնդիրներով: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, 115 անուն օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսության ընդհանուր ծավալն առանց հավելվածների կազմում է 148 էջ՝ ներառյալ օգտագործված գրականության ցանկը: Ատենախոսությունը ներառում է 27 աղյուսակ, 38 գծապատկեր և 10 հավելված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության «Ներածություն» բաժնում հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտը և առարկան, հետազոտության նպատակը և խնդիրները, տեսամեթոդական և տեղեկատվական հիմքերը, ձևակերպվել են ատենախոսության գիտական նորույթը, գործնական նշանակությունը և կիրառման հնարավորությունները:

Ատենախոսության առաջին՝ **«Ստարտափ ընկերությունների և ստարտափ էկոհամակարգի էությունը, բնութագրիչ առանձնահատկությունները»** գլխում ուսումնասիրվել են գիտական գրականությունում ստարտափ ընկերությունների վերաբերյալ օգտագործված սահմանումները և դրանցում ներկայացվող բնութագրիչ առանձնահատկությունները, որոնց վերլուծությամբ տրվել է ստարտափ ընկերության ամփոփ սահմանումը: Վերլուծվել են ստարտափ էկոհամակարգի բաղադրիչներն ու դրանց ազդեցությունը ստարտափ ընկերության գործունեության վրա, ինչպես նաև ուսումնասիրվել է ստարտափ ընկերությունների դերը որպես տնտեսական աճի խթանիչներ:

Ուսումնասիրելով ստարտափ ընկերության վերաբերյալ հայտնի տեսաբաններ և գիտնականներ Յ. Շումպետերի, Ու. Գարթների, Է. Ռիսի, Ս. Բլենքի, Բ. Դորֆի և

այլոց կողմից տրված սահմանումները՝ բացահայտվել են ստարտափ ընկերության հետևյալ բնութագրիչ առանձնահատկությունները՝

- ստարտափ ընկերությունը *նորարարական ընկերություն* է, որն ստեղծում և շուկա է ներմուծում նորարարական արտադրանք, գործընթաց կամ ծառայություն,
- ստարտափ ընկերությունը գործում է *անորոշության և ռիսկի* պայմաններում, ինչն իր հերթին մեծացնում է այս ընկերությունների *ձախողման հավանականությունը*[1],
- *արագ աճի կարողությունը* ստարտափ ընկերության ևս մեկ կարևոր բնութագրիչ է, որը թույլ է տալիս ընկերությանն արագորեն գրավել շուկան և ընդլայնվել,
- ստարտափ ընկերության արդյունավետ ընդլայնման և շարունակական աճի համար կարևոր է *բիզնես մոդելի կրկնունակությունը*:

Ստարտափ ընկերություններն առանձնանում են նաև զարգացման տարանջատված կենսափուլերով՝ *կազմավորում, վավերացում և աճ,* որոնցից յուրաքանչյուրն ունի իր հստակ ձևակերպված նպատակներն ու ֆինանսավորման շրջափուլերը՝ նախասաղմնային, սաղմնային և ավելի բարձր՝ A, B, C, D, E փուլեր: Հիմնվելով ստարտափ ընկերությունների վերոգրյալ բնութագրիչ առանձնահատկությունների վրա՝ տրվել է ստարտափ ընկերության ամբողջական սահմանումը, ըստ որի՝ *ստարտափ ընկերությունը գերարագ աճի ներուժով, զարգացման տարանջատված փուլերով նորարարական բիզնես-նախաձեռնություն է, որը գործելով ռիսկային և անորոշության պայմաններում՝ աշխատում է սեփական բիզնես-մոդելի անընդհատ կատարելագործման ուղղությամբ՝ միաժամանակ խիստ կախված լինելով մասնավոր կապիտալից և ունենալով ձախողման բարձր հավանականություն:*

Ստարտափ էկոհամակարգի բաղադրիչների և դրանց առանձնահատկությունների ուսումնասիրությամբ առանձնացվել են էկոհամակարգի բովանդակային ուղղությունները, որոնք որոշիչ են ստարտափ ընկերության զարգացման համար (տե՛ս Աղյուսակ 1).

Աղյուսակ 1. Ստարտափ էկոհամակարգի բովանդակային ուղղությունները[2]

կրթական հաստատություններ և բուհեր	մի կողմից լուծում են ստարտափ ընկերությունների մասնագիտական կադրերով ապահովման հարցը, լրացնում են հիմնադիրների ձեռնարկատիրական գիտելիքների և հմտությունների պակասը, մյուս կողմից՝ ստեղծում են նպաստավոր միջավայր նորարարական գաղափարների ու գյուտերի ձևավորման համար
մարդկային ռեսուրսներ	կարևորվում են ռեսուրսների հավաքագրման և ստարտափ ընկերության ճիշտ թիմի ձևավորման, աշխատուժի պակասը լրացնելու նպատակով օտարերկրացի աշխատուժի ներգրավման համար
ֆինանսավորում	ենթադրում է ներդրումային միջավայրի նպաստավորությունը, ֆինանսական միջոցների հասանելիությունն ու բավարար չափով ապահովումը

[1] Ըստ որոշ հետազոտությունների՝ ձախողվում է ստարտափ ընկերությունների մոտ 90-95%-ը: Սա թեև բարձր ցուցանիշ է, սակայն բնորոշ է հենց արագ աճի կարողությամբ ընկերություններին: Աղբյուր՝ Nobel C., «Why Companies Fail—and How Their Founders Can Bounce Back» Harvard Business School, URL:https://hbswk.hbs.edu/item/why-companies-failand-how-their-founders-can-bounce-back (հասանելի էր 05.09.2023թ.)

[2] Աղյուսակը մշակվել է հեղինակի կողմից:

պետական աջակցություն	ենթադրում է քաղաքականությունների մշակում, իրավական կարգավորումների ապահովում, ըստ անհրաժեշտության հարկային խթանների տրամադրում ստարտափ ընկերություններին, նաև ստարտափ ընկերությունների ֆինանսավորում պետության մասնակցությամբ
բարենպաստ գործարար միջավայր	ստեղծում է գործընկերություններ հաստատելու հնարավորություններ, էկոհամակարգում գործող կառույցները տրամադրում են անհրաժեշտ աջակցություն ստարտափ ընկերություններին
ձեռներեցական մշակույթ	կարևոր դեր է կատարում ստարտափ ձեռնարկատիրությունը երկրում տարածելու առումով

Այնուհետև, ուսումնասիրվել են ստարտափ էկոհամակարգերի զարգացվածության աստիճանը գնահատող տարբեր մոտեցումները, որոնցից առանձնակի ուշադրության է արժանացել Դ. Քուկիեի և Ֆ. Կոնի մշակած ստարտափ էկոհամակարգերի հասունության գնահատման մոդելը[3]: Այս մոդելը սահմանում է էկոհամակարգի հասունության չորս մակարդակ՝ ձևավորվող (M1), զարգացող (M2), հասուն (M3) և ինքնաբավ (M4), որոնց գնահատումը թույլ է տալիս որոշել, թե էկոհամակարգը զարգացման որ փուլում է, հասունությանը խոչընդոտող ինչ խնդիրներ կան, և ինչ քայլեր են անհրաժեշտ դրանց հաղթահարման ու հաջորդ մակարդակ անցման համար: Ատենախոսության երրորդ գլխում մոդելն օգտագործվել է Հայաստանի ստարտափ էկոհամակարգի զարգացվածության աստիճանը որոշելու, առկա խնդիրները վեր հանելու և էկոհամակարգի հասունության հաջորդ մակարդակ անցմանն ուղղված առաջարկություններ մշակելու համար:

Ուսումնասիրվել է ստարտափ ընկերությունների խթանիչ դերը տնտեսության զարգացման գործում, որը թույլ է տվել կատարել հետևյալ եզրահանգումները.

- այս ընկերությունները տնտեսության զարգացմանը նախ նպաստում են նրանով, որ ստեղծելով նորարարական արտադրանք կամ ծառայություն՝ խթանում են նորարարությունը, որը տնտեսական առաջընթացի և զարգացման կարևոր շարժիչ ուժերից մեկն է,
- ստարտափ ընկերությունների ներգրաված վենչուրային կապիտալը նույնպես դրական է ազդում տնտեսական աճի վրա, քանի որ միկրոմակարդակում խթանում է նորարարությունը և նոր ընկերությունների ստեղծումը, իսկ մակրոմակարդակում նպաստում է գիտահետազոտական մշակումների և փորձարկումների վրա կատարվող ծախսերի ավելացմանը, ինչպես նաև՝ զբաղվածության ընդհանուր աճին[4],
- ստարտափ ընկերությունների դերը կարևոր է նաև աշխատատեղերի ստեղծման գործում, թեև նրանց կողմից ստեղծվող աշխատատեղերի թիվը, համեմատած գործող ավանդական բիզնեսների հետ, մեծ չէ: Այս ընկերություններն

[3] Cukier D. and Kon F., "A maturity model for software startup ecosystems", Journal of Innovation and Entrepreneurship, 2018 7:14, https://doi.org/10.1186/s13731-018-0091-6

[4] McDonald A., "Venture Capital's Impact on American Economic Growth and the Industry's Institutional Determinants, 1975-1995", The London School of Economics and Political Science, Economic History Student Working Papers, No: 013 2023

աշխատատեղերն ստեղծում են ոչ միայն ուղղակիորեն, այլև խթանելով մրցակցությունն այլ ոլորտներում՝ անուղղակիորեն նպաստում են այդ ոլորտներում նոր աշխատատեղերի ստեղծմանը՝ նպաստելով զբաղվածության աճին:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ստարտափ ընկերությունների զարգացման միտումները և խնդիրները»** գլխում կատարվել է աշխարհի առաջատար ստարտափ էկոհամակարգերի և տարածաշրջանի ստարտափ էկոհամակարգերի համեմատական գնահատում, ինչպես նաև Հայաստանի ստարտափ էկոհամակարգի դիրքային առանձնահատկությունների վերլուծություն: Ուսումնասիրվել են «Startup Genome» և «StartupBlink» կազմակերպությունների կողմից իրականացվող գլոբալ վարկանշային գնահատումները: Նախ պետք է նշել, որ Հայաստանի, ինչպես նաև տարածաշրջանի այլ երկրների ստարտափ էկոհամակարգերն այնքան թույլ են զարգացած, որ չեն ընդգրկվել «Startup Genome»-ի կողմից գնահատված աշխարհի 140 լավագույն էկոհամակարգերի (40 առաջատար և 100 զարգացող էկոհամակարգեր) ցանկում[5]: Ի տարբերություն դրան՝ «StartupBlink» կազմակերպության «Ստարտափ էկոհամակարգերի գլոբալ համաթիվ» վարկանշային գնահատմամբ Հայաստանը և տարածաշրջանի այլ երկրներն ընդգրկված են աշխարհի 100 երկրների և 1000 քաղաքների ստարտափ էկոհամակարգերի գնահատման ցանկում, որտեղ առաջատար են ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան, Իսրայելը, Կանադան և Շվեդիան[6]: Ըստ այս գնահատման՝ տարածաշրջանում առաջատարը Թուրքիան է (45-րդ տեղ), իսկ Հայաստանը տարեցտարի բարելավում է իր դիրքը: Զեկույցի տվյալներով՝ Հայաստանի ստարտափ էկոհամակարգն առաջինն է Կովկասում՝ առաջ անցնելով Վրաստանից (71-րդ տեղ) և Ադրբեջանից (84-րդ տեղ): Առաջին «միաեղջյուր»[7] ընկերությունը գրանցելու շնորհիվ 2023 թ. Երևանը, որպես միակ գլխավոր ստարտափ հանգույց, առաջին անգամ մուտք է գործել աշխարհի 250 քաղաքների ցանկ (զբաղեցնում է 221-րդ տեղը 1000 քաղաքների ցանկում): Այս գնահատումը թույլ է տալիս եզրակացնել, որ թեև Հայաստանի ստարտափ էկոհամակարգն առաջատար դիրքերում է, սակայն անհրաժեշտ են կայուն դիրքի ապահովմանն ուղղված քայլեր:

Ուսումնասիրվել է վենչուրային կապիտալի ոլորտի զարգացման միջազգային փորձը, որը ցույց է տվել, որ ոլորտի զարգացմանը և կայացմանը մեծ չափով նպաստում է պետության մասնակցությունը ստարտափ ընկերությունների ներդրումային գործարքներում և հարկային արտոնությունների տրամադրումը ներդրում ստացող ընկերություններին, ինչպես նաև պետության կողմից ներդրողների իրավունքների պաշտպանության երաշխավորումը: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացրել Իսրայելի վենչուրային կապիտալի ոլորտի զարգացման փորձը, որտեղ հիմնական շեշտը դրվել է զարգացման վաղ փուլում գտնվող ստարտափ ընկերություններում ֆինանսավորման խնդիրը լուծելու, ինչպես

[5] Տարածաշրջանի երկրներից միայն Ստամբուլի ստարտափ էկոհամակարգն է ընդգրկվել նշված վարկանշային աղյուսակի 100 զարգացող էկոհամակարգերի աղյուսակում (16-րդ տեղ), որի բարձր ցուցանիշները հիմնականում ֆինանսավորման հասանելիության և տաղանդների ու փորձի գործոններով են:

[6] StartupBlink, "Global Startup Ecosystem Index 2023"

[7] Միաեղջյուր են համարվում այն ստարտափ ընկերությունները, որոնց արժեքը գերազանցում է 1 մլրդ ԱՄՆ դոլարը, և որոնք չցուցակված մասնավոր ընկերություններ են:

նաև գիտահետազոտական և փորձարարական (ԳևՓ) նախագծերի թվի ավելացման վրա[8]: Այդ նպատակով ստեղծված պետական վենչուրային ֆոնդը, գործելով «ֆոնդերի ֆոնդ» մեխանիզմով, նպաստել է Իսրայելում վենչուրային կապիտալի ֆոնդերի թվի ավելացմանը, ինչպես նաև կատարել է ներդրումներ ստարտափ ընկերություններում որպես ինքնուրույն ֆոնդ: Ներդրումները խթանելու համար տրամադրվել են նաև հարկային արտոնություններ, և պետության կողմից երաշխավորվել են ստարտափ ընկերություններում կատարված օտարերկրյա ներդրումները՝ փոխհատուցելով ներդրված գումարի 80%-ն այն ներդրումային գործարքների դեպքում, որոնց շահութաբերությունը գնալով նվազել է: Նշված ծրագրերի իրականացման արդյունքում այսօր Իսրայելը ստարտափ էկոհամակարգերի վարկանշային աղյուսակների առաջին եռյակում է ԱՄՆ-ից և Մեծ Բրիտանիայից հետո և տևականորեն պահպանում է իր կայուն դիրքը:

Միջազգային փորձի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Հայաստանում վենչուրային կապիտալի ոլորտի զարգացմանը մեծ չափով կնպաստի պետության աջակցությունը, մասնավորապես՝ մասնավոր ներդրումային ֆոնդերի հետ համատեղ մասնակցությունը վենչուրային կապիտալի ներդրումային գործարքներում և ըստ անհրաժեշտության՝ հարկային արտոնությունների նախատեսումը ներդրում ստացող ընկերություններին:

Կատարվել է նաև ստարտափ ընկերությունների զարգացման համաշխարհային դրսևորումների ուսումնասիրություն, որը ցույց է տվել, որ ներկայումս միտումներն ավելի շատ անկումային են: Նվազել են ստարտափ ընկերություններում կատարվող վենչուրային ներդրումների ծավալները. 2023 թվականի առաջին կիսամյակում ներդրումների ծավալները նվազել են 53%-ով 2022 թվականի առաջին կիսամյակի համեմատ[9]: Նկատվում են նաև ապագլոբալացման միտումներ: Չինաստանը, որի ստարտափ էկոհամակարգն աշխարհի լավագույն էկոհամակարգերից է, մի քանի տարի առաջ որոշեց «անջատել» աշխարհից իր համացանցային տիրույթը և զարգանալ տեղական մակարդակում: «Անջատման» նման գործընթացն ավելի փոքր չափով, բայց ավելի ինտենսիվորեն, շարունակում է ռուսական ստարտափ էկոհամակարգը, որն այժմ գտնվելով արևմտյան երկրների պատժամիջոցների ներքո՝ աշխատում է աշխարհի հետ ավելի քիչ կապվածություն ունեցող ազգային էկոհամակարգ ստեղծել: Ապագլոբալացման այս համատեքստում առաջ են գալիս տարածաշրջանային հանգույցներ, օրինակ՝ Սինգապուրի ստարտափ էկոհամակարգի դիրքավորումը որպես Ասիայի տարածաշրջանի առաջատար ստարտափ-հանգույց, ինչպես նաև Դուբայը՝ Միջին Արևելքում և Լագոսը՝ Աֆրիկայում: Սակայն տարածաշրջանային հանգույցների դերն ու նպաստավորությունը դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն, և դժվար է ասել, թե ինչ արժեք ու օգուտներ կստեղծեն դրանք երկարաժամկետ առումով:

---

[8] Avnimelech G., M. Kenney, M. Teubal, "A Life Cycle Model for the Creation of National Venture Capital Industries: Comparing the U.S. and Israeli Experiences", 2007

[9] Teare G., "Global Funding Slide In 2022 Sets Stage For Another Tough Year", 2023, Crunchbase News, URL:https://bit.ly/3MktUNu (հասանելի էր՝ 29.10.2023 թ.)

Միջազգային այս դրսևորումների համատեքստում պետք է նկատել, որ հայկական ստարտափ ընկերությունները ևս խոցելի են ինչպես տեղական էկոհամակարգում առկա խնդիրների, այնպես էլ միջազգային մակարդակում տեղի ունեցող տարբեր իրադարձությունների առումով: Հայկական ստարտափ ընկերությունների (հատկապես՝ արտահանող ընկերությունների) գործունեության վրա բացասական ազդեցություն ունեցավ և դեռ շարունակում է ունենալ 2022 թ. ծավալված ռուս-ուկրաինական պատերազմի հետևանքով առաջացած կտրուկ գնաճը, ինչպես նաև արտարժույթի փոխարժեքի շարունակական տատանումները, մասնավորապես՝ ՀՀ դրամի մոտ 20%-ով արժևորումն ԱՄՆ դոլարի նկատմամբ: Նաև երկրում տիրող քաղաքական և անվտանգային անկայուն իրավիճակն իր հերթին խաթարում է ստարտափ էկոհամակարգի և ստարտափ ընկերությունների գործունեությունը՝ բացասաբար ազդելով թե՛ Հայաստանի ներդրումային միջավայրի գրավչության, թե՛ հայկական ստարտափ էկոհամակարգի ընդհանուր հեղինակության վրա: Անկումային նման դրսևորումների ազդեցությունը հայկական ստարտափ էկոհամակարգի և ստարտափ ընկերությունների գործունեության վրա հնարավորինս նվազեցնելու համար անհրաժեշտ է ստեղծել հիմքեր ստարտափ ընկերությունների կայուն զարգացումն ապահովելու համար:

Ատենախոսության երրորդ՝ **«Ստարտափ ընկերությունների զարգացման խնդիրները և դրանց հաղթահարման ուղիները ՀՀ-ում»** գլխում կատարվել է Հայաստանի ստարտափ էկոհամակարգի ներկա վիճակի ուսումնասիրություն ըստ էկոհամակարգային բովանդակային ուղղությունների, գնահատվել է էկոհամակարգի հասունության մակարդակը: Ուսումնասիրվել է Հայաստանում վենչուրային կապիտալի ոլորտի զարգացման ներկա վիճակը, ինչպես նաև հաշվարկվել է պետական համաֆինանսավորմամբ ներդրումային գործարքների և հարկային խթանների արդյունավետությունը: Ամփոփվել և վերլուծվել են հայկական ստարտափ ընկերությունների շրջանում անցկացված հարցման արդյունքները, որոնց հիման վրա կատարվել է կոռելյացիոն և գործոնային վերլուծություն, տրվել են առաջարկություններ խնդիրների հնարավոր լուծումների ուղղությամբ:

Հայաստանի ստարտափ էկոհամակարգի վերլուծությամբ բացահայտվել է, որ թեև էկոհամակարգում գրանցվել են որոշակի դրական տեղաշարժեր, այնուամենայնիվ, առկա են զգալի խոչընդոտներ: Մասնավորապես՝ ամեն տարի ստեղծվող ստարտափ ընկերությունների թիվը, որը էկոհամակարգի հասունության կարևոր ցուցանիշ է, բավական փոքր է՝ տարեկան մինչև մոտ 33 ընկերություն[10], ինչը չի նպաստում էկոհամակարգի զարգացմանը: Հայաստանում ստարտափ էկոհամակարգն ունի դեռևս մեկ «միաեղջյուր» ընկերություն[11], ինչը թեև

[10] Ստարտափ ընկերությունների թվի վերաբերյալ հստակ տեղեկություն հնարավոր չէ ներկայացնել, քանի որ այս ընկերությունները շատ արագ են փոփոխվում՝ բացվում են նորերը, որոշները ձախողվում կամ փակվում են, միաձուլվում են այլ ընկերությունների հետ կամ գնվում են մյուսների կողմից: Բացի այդ, Հայաստանում ստարտափ ընկերությունների վերաբերյալ պաշտոնական հրապարակային վիճակագրություն և միասնական ռեեստր գոյություն չունի, և վերլուծության համար հիմք են ծառայել «Crunchbase» տվյալների միջազգային շտեմարանի և հայկական ինկուբացիոն ու աքսելերացիոն ծրագրերում ընդգրկված ստարտափ ընկերությունների թվերը:

[11] Թոսունյան Ս., «Ստարտափ երազանք՝ «Միաեղջյուր», EVN Report, 7 հոկտեմբեր 2021, https://evnreport.com/arm/creative-tech-arm/unicorns-spotted-in-armenia (հասանելի էր՝ 08.08.2022 թ.)

տարածաշրջանի այլ էկոհամակարգերի համեմատ առաջընթաց է[12], սակայն «միաեղջյուրների» թվի ավելացմանն ուղղված աշխատանքները չեն տալիս բավարար արդյունք, բացակայում են ելքեր գրանցած ընկերությունները[13]:

Ձեռնարկատիրական մշակույթը, որը ստարտափ էկոհամակարգի զարգացման կարևոր գործոն է, թույլ հիմքեր ունի Հայաստանում. «Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց Հայաստան 2019/2020 թթ.»-ի տվյալներով՝ հայ ձեռնարկատերերի շրջանում (սկսնակ և կայացած) բիզնես հիմնելու ամենատարածված շարժառիթը «ապրուստ վաստակելն է», մինչդեռ ստարտափ ընկերությունները հիմնականում ստեղծվում են «աշխարհում մի բան փոխելու» նպատակի վրա հիմնված շարժառիթով[14]:

Ըստ Նորարարության գլոբալ համաթվի 2023 թվականի զեկույցի՝ Հայաստանում կրթության վրա կատարվող ծախսերը ցածր են և չեն նպաստում կրթության որակի բարձրացմանը[15], իսկ գիտահետազոտական և փորձարարական (ԳևՓ) մշակումների վրա կատարվող համախառն ծախսերը կազմել են ՀՆԱ-ի 0.2%-ը[16], ինչը ևս բավական ցածր ցուցանիշ է: Ընդ որում հարկ է նշել, որ տարածաշրջանում Հայաստանն ունի ամենացածր ցուցանիշը Ադրբեջանի և Վրաստանի համեմատ[17]:

Տեղական ստարտափ էկոհամակարգում բավարար չեն նաև ֆինանսավորման միջոցները: Բացի այն, որ դրամաշնորհային ծրագրերի շրջանակում հատկացվող գումարները հիմնականում փոքր են և զգալի ազդեցություն չեն ունենում ստարտափ ընկերության հետագա առաջընթացի վրա[18], նախասաղմնային և սաղմնային փուլերից բարձր փուլերի ներդրումները հիմնականում բացակայում են: Հայաստանի ստարտափ էկոհամակարգում գործում է մի քանի տեղական վենչուրային ֆոնդ, որոնց ներդրումային կապիտալը, միասին վերցրած, չի գերազանցում 10 մլն ԱՄՆ դոլարը[19]: Ավելի բարձր փուլերի ներդրումների համար հայկական ստարտափ ընկերությունները հիմնականում դիմում են օտարերկրյա վենչուրային ֆոնդերին, ինչը հանգեցնում է հայկական ստարտափ ընկերությունների արտահոսքի: Սրա պատճառներից մեկը Հայաստանում խոշոր միջազգային վենչուրային ֆոնդերի ներկայացուցչությունների բացակայությունն է, որը պայմանավորված է Հայաստանի

---

[12] Նշենք, որ տարածաշրջանի երկրներից Վրաստանը, Իրանը և Ադրբեջանը դեռևս չունեն «միաեղջյուր» ընկերություններ, միայն Թուրքիան 2021 թվականից ունի երկու միաեղջյուր և մեկ բազմաեղջյուր ընկերություն (աղբյուր՝ Startup Genome, “Global Startup Ecosystem Ranking 2023”):

[13] «Ելքը» այն իրավիճակն է, երբ ստարտափ ընկերությունը ցուցակվում է (առաջնային հրապարակային առաջարկ (անգլ. IPO)) և (կամ) վաճառվում է ներդրողներին կամ այլ ընկերության (գնման կամ միաձուլման գործարք): Հայաստանի կամ միջազգային ֆոնդային բորսաներում ցուցակված ստարտափ ընկերություններ չկան, իսկ գնման/միաձուլման և ձեռքբերման գործարքների թվի մասին տեղեկությունները սահմանափակ են, ինչը թույլ չի տալիս իրական պատկերն արտացոլել:

[14] Ամերիաբանկ ՓԲԸ, «Ձեռնարկատիրության համաշխարհային զեկույց Հայաստան 2019/2020», 184 էջ

[15] Աղբյուր՝ Global Innovation Index 2022, “Innovation in the face of uncertainty”, 16th Edition, World Intellectual Property Organization

[16] Global Innovation Index 2023, “Innovation in the face of uncertainty”, 16th Edition, World Intellectual Property Organization

[17] Նույն տեղը

[18] Պետք է նշել, որ հատկացվող դրամաշնորհները հիմնականում 3 000 – 25 000 ԱՄՆ դոլարի սահմանում են, իսկ ՁԻՀ-ի կողմից իրականացվող «Նորարարության զարգացման և մարզային համաֆինանսավորվող դրամաշնորհների» ծրագրով հատկացվում է մինչև 50 000 ԱՄՆ դոլար որպես համաֆինանսավորում, սակայն շատ ստարտափ ընկերություններ, հատկապես՝ գիտահեն ստարտափ ընկերությունները, հնարավորություն չեն ունենում օգտվելու այս դրամաշնորհից համաֆինանսավորման իրենց մասնաբաժինը հայթայթել չկարողանալու պատճառով:

[19] Արամյան Հ., «Որքանով է Հայաստանը գրավիչ վենչուրային կապիտալի համար», ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոն, 2018 URL: https://bit.ly/3tUrGOA (հասանելի էր՝ 08.08.2022 թ.)

ներդրումային միջավայրի գրավչության պակասով: Այդ մասին է վկայում «Վենչուրային կապիտալի և մասնավոր բաժնեմասնակցության» համաթվի գնահատականը Հայաստանին[20], որի 2021 թվականի տվյալներով Հայաստանը բավական ցածր տեղ է զբաղեցնում՝ 90-րդ տեղը 125 երկրների շարքում, ընդ որում՝ գրանցել է հետընթաց (2018 թ. տվյալներով 77-րդ տեղում էր): Հայաստանի օրենսդրական դաշտի վերլուծությամբ[21] պարզվել է, որ այն ընդհանուր առմամբ նպաստավոր է վենչուրային կապիտալի ոլորտի զարգացման համար, սակայն կան որոշակի թերություններ, մասնավորապես՝ կառուպցիոն դրսևորումները, պատերազմական անկայուն վիճակը երկրում, ֆոնդ ստեղծելու գործընթացի բարդությունները և այլն:

Պետական աջակցության տեսանկյունից ստարտափ էկոհամակարգի առաջընթացի առումով էական են ՀՀ ԲՏԱ նախարարության դրամաշնորհային մրցույթները, որոնք սակայն էապես չեն լուծում ֆինանսական միջոցների անբավարարության խնդիրը: Մասնագիտական ներուժի հոսքը Հայաստան ավելացնելու նպատակով Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգում պարզեցվել և արագացվել են կացության տրամադրման ընթացակարգերը[22]: Հայաստանը տարածաշրջանում ինժեներական գիտահետազոտական կենտրոն դարձնելու և ինժեներական ու բարձր տեխնոլոգիական արտադրանքը և ծառայությունները գլոբալ շուկաներ արտահանելու նպատակով կարևոր է պետություն-մասնավոր հատված համագործակցության շրջանակում իրականացվող «Ինժեներական քաղաք» ծրագիրը: Նշված ծրագրերը և բարելավումները թեև ընդհանուր առմամբ խթանում են էկոհամակարգի զարգացումը, սակայն պետության աջակցության տեսանկյունից կան խնդիրներ, որոնք թույլ չեն տալիս էկոհամակարգի առավել արագ և կայուն զարգացումը, մասնավորապես՝ պետության համաֆինանսավորմամբ վենչուրային կապիտալի ներդրումային ծրագրերի բացակայությունը, պետության ոչ բավարար միջամտությունը ստարտափ էկոհամակարգի ռազմավարության մշակմանը և իրականացմանը, օրենսդրական բացերի կարգավորմանը և այլ խնդիրներ:

Ստարտափային միջոցառումների տեսանկյունից պետք է նշել, որ դրանց հաճախականությունը մեծ չէ, չնայած Հայաստանի ստարտափ էկոհամակարգում անցկացվում են բազմաթիվ միջոցառումներ: Այնուամենայնիվ, բացակայում են միջազգային մասշտաբի խոշոր միջոցառումները, չկան կոնկրետ ուղղվածությամբ (օր.՝ ֆինթեք, ԱԲ, բիոթեք) միջոցառումներ:

Ստարտափ էկոհամակարգում տեղի ունեցող իրադարձությունները լուսաբանող մեդիայի տեսանկյունից էկոհամակարգում գործում է չորս խոշոր մեդիա-հարթակ, որոնք առաջարկում են սեփական մեդիաբովանդակությունը, կազմակերպում են

---

[20] IESE Business School of the University of Navarra, emlyon Business School, The Venture Capital & Private Equity Country Attractiveness Index 2021, https://blog.iese.edu/vcpeindex/armenia (հասանելի էր՝ 15.10.2023թ.)

[21] Վենչուրային կապիտալի ոլորտի վերաբերյալ ՀՀ օրենսդրական դաշտի առավելությունների և թերությունների վերլուծությունը իրականացվել է «ԹիՔեյ ընդ Փարթներս» ՓԲԸ ընկերության կողմից՝ 2018-2022 թթ. Հայաստանում վենչուրային ներդրումների ներգրավման հիմնահարցերի վերաբերյալ կատարված իրավաբանական խորհրդատվությունների և ստացված վիճակագրական տվյալների հիման վրա:

[22] ՀՀ Կառավարություն. «Հայաստանի Հանրապետության միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը և գործողությունների ծրագիրը հաստատելու մասին» N801-Լ, որոշում, 20 մայիսի 2021 թ., URL:https://www.arlis.am/documentview.aspx?docid=152909 (հասանելի էր՝ 08.08.2022 թ.)

առցանց և անցանց քննարկումներ, զրույցներ ստարտափ ընկերությունների և գիտության թեմաների շուրջ, ինչը ստարտափ էկոհամակարգի զարգացվածության սկզբնական փուլերի համար բավարար ցուցանիշ է:

Կատարված ուսումնասիրության հիման վրա գնահատվել է Հայաստանի ստարտափ էկոհամակարգի հասունության մակարդակը: Ըստ Աղյուսակ 2-ի՝ Հայաստանի ստարտափ էկոհամակարգը գործոնների մեծ մասով փաստորեն համապատասխանում է հասունության գնահատման վերոնշյալ չորս մակարդակներից առաջին՝ *M1 ձևավորվող* մակարդակին, թեև որոշ ցուցանիշներով ձգտում է նաև *M2 զարգացող* մակարդակին: Ցուցանիշները հատկապես ցածր են տարեկան ստեղծվող նոր ստարտափ ընկերությունների, բուհերում ձեռնարկատիրության և ձեռնարկատիրական արժեհամակարգի գործոններով, ինչը նշանակում է, որ *M2 զարգացող* մակարդակին անցում կատարելու և Հայաստանի ստարտափ էկոհամակարգի զարգացումը խթանելու համար անհրաժեշտ է իրականացնել բուհերում ստարտափ-ձեռնարկատիրության ուսուցման և ձեռնարկատիրական արժեհամակարգի զարգացմանն ուղղված քայլեր, ինչպես նաև մեծացնել ստարտափային միջոցառումների հաճախականությունը՝ հասցնելով դրանք ամսականից շաբաթականի:

Աղյուսակ 2. Հայաստանի ստարտափ էկոհամակարգի հասունության մակարդակը

Հասունության գործոն	***M1 ձևավորվող***	***M2 զարգացող***	***M3 հասուն***	***M4 ինքնաբավ***	***Հայաստան***
Տարեկան հիմնադրվող ստարտափ ընկերություններ	<200*	200-1000*	1000+**	1000+**	մոտ 33
Ելքի ռազմավարություններ	ոչ մի*	մի քանի*	շատ ձեռքբերումներ և միաձուլումներ, մի քանի IPO***	շատ ձեռքբերումներ և միաձուլումներ, մի քանի IPO***	ձեռքբերման մոտ 2-3 գործարք, ոչ մի IPO
Մուտք գլոբալ շուկա	<10%*	10-40%*	>40%**	>40%**	<10%
Ձեռնարկատիրությունը բուհերում	<2%***	2-10***%	10%**	≥10%*	<2%[23]
Ձեռնարկատիրական արժեհամակարգ (ըստ Ձեռնարկատիրության համաշխ. համաթվի)	<0.5***	0.5-0.6***	0.6-0.7***	>0.7**	0.2[24]
Էկոհամակարգի հետազոտական տվյալներ	չկա*	չկա*	մասնակի**	ամբողջական***	մասնակի

[23] Բուհերում ձեռնարկատիրության ցուցանիշը չափելու համար անհրաժեշտ տվյալները բացակայում են: Հայաստանի բուհերի կրթական ծրագրերում ներառված չեն ստարտափ ձեռներեցության դասընթացներ, և բուհերը դեռևս բավարար չափով չեն խթանում տեխնոլոգիական ձեռնարկատիրությունը: Հետևաբար՝ դժվար կլինի ասել՝ արդյոք բուհերի շրջանավարտների կողմից ստարտափ ընկերության հիմնումը բուհում ստացած ձեռնարկատիրական կրթության արդյունք է, թե ոչ: Այդ պատճառով ցուցանիշը ներկայացվել է մոտավոր:

[24] Ács Z., Szerb L., Lafuente E., Márkus G., "The Global Entrepreneurship Index 2019"

Հասունության գործոն	***M1 ձևավորվող***	***M2 զարգացող***	***M3 հասուն***	***M4 ինքնաբավ***	***Հայաստան***
Ձեռնարկատերերի սերունդներ	0*	0*	1-2**	≥3***	1
Հրեշտակ ներդրողների ներդրումներ	էական չէ*	էական չէ*	որոշ չափով**	շատ***	որոշ չափով
Միջոցառումներ	ամսական***	շաբաթական ***	ամեն օր**	> ամեն օր*	ամսական
Մեդիա	ոչ մի*	մի քանի**	բավական***	շատ***	մի քանի

*Ծանոթագրություն. աստղանիշով նշված ցուցանիշները ցույց են տալիս, թե գործոնը կարևորության ինչ աստիճան ունի հասունության տվյալ մակարդակի համար: *** - շատ կարևոր, ** կարևոր, ** ոչ այնքան կարևոր*

Աղյուսակը մշակվել է հեղինակի կատարած հետազոտության տվյալներով՝ ըստ ստարտափ էկոհամակարգերի հասունության գնահատման մոդելի[25]

Հայաստանի վենչուրային կապիտալի ոլորտի զարգացումը խթանելու նպատակով ուսումնասիրվել են պետության օժանդակության հնարավոր ձևերն այս ոլորտում: Դիտարկվել է պետության *ուղղակի* մասնակցությունը վենչուրային ներդրումների գործարքներում[26], կատարվել է պետության կողմից վենչուրային ներդրումների համաֆինանսավորման և հարկային արտոնությունների տրամադրման արդյունավետության հաշվարկ[27]: Արդյունավետության գնահատման համար կիրառվել է հարկային արտոնությունների տրամադրման երեք հնարավոր մոտեցում.

1) *վենչուրային կապիտալի ներդրում՝ հարկային արտոնությունների տրամադրմամբ,*
2) *վենչուրային կապիտալի ներդրում՝ առանց հարկային արտոնությունների տրամադրման,*
3) *ստարտափ ընկերությունների բնականոն զարգացում՝ առանց վենչուրային կապիտալի ներդրման և հարկային արտոնությունների:*

Ըստ հաշվարկի՝ պետության և միջազգային մասնավոր ֆոնդի համատեղ մասնակցության առավել արդյունավետ հարաբերակցությունը համապատասխանաբար 70%-30%-ն է, որն ապահովում է ամենաբարձր շահութաբերությունը ինչպես պետության ներդրումից (14%), այնպես էլ մասնավոր ֆոնդի ներդրումից (20%): Մասնակցության այլ հարաբերակցությունները (40% - 60%, 50% - 50% և 60% - 40%) ապահովել են շահութաբերության ոչ բարձր մակարդակներ:

[25] Cukier D. and Kon F., "A maturity model for software startup ecosystems", Journal of Innovation and Entrepreneurship, 2018 7:14, https://doi.org/10.1186/s13731-018-0091-6

[26] Անուղղակի օժանդակությունը ենթադրում է բարենապաստ ինստիտուցիոնալ միջավայրի ստեղծումը: Fazekas B. and Becsky-Nagy P., "A new theoretical model of government backed venture capital funding", Acta Oeconomica 71 (2021) 3, pp. 487–506

[27] Հաշվարկի նպատակով նախատեսվել է վենչուրային կապիտալի ներդրում ստացող ստարտափ ընկերություններին ներդրումային ժամանակահատվածի ողջ ընթացքում ամբողջությամբ ազատել միայն ավելացված արժեքի հարկից (ԱԱՀ), աշխատողների աշխատավարձից գանձվող եկամտային հարկից և շահութահարկից: Ներդրումները նախատեսվել են տեխնոլոգիական ոլորտի ինը ստարտափ ընկերությունում (երեքը սաղմնային փուլի, վեցը A փուլի ներդրմանը համապատասխանող ընկերություններ): Ներդրումային ժամկետը սահմանվել է 6 տարի՝ 7-րդ տարում նախատեսելով ներդրողների ելքը տվյալ ընկերություններից:

Աղյուսակ 3. Պետության և մասնավոր ներդրումային ֆոնդի մասնակցությամբ ներդրումային գործունեության ֆինանսական արդյունավետության հաշվարկ

Ակնկալվող օգուտներ	**Սցենար 1** ՎԿ ներդրում՝ հարկային արտոնությունների տրամադրմամբ	**Սցենար 2** ՎԿ ներդրում՝ առանց հարկ. արտոնությունների տրամադրման	**Սցենար 3** Ստարտափ ընկերությունների բնականոն զարգացում՝ առանց ՎԿ ներդրման և հարկային արտոնությունների
Ներդրումների տնտեսական շահութաբերության կանխատեսում՝ պետության մասնակցությունից (70%)	14%	20%	կիրառելի չէ
Ներդրումների տնտեսական շահութաբերության կանխատեսում՝ մասնավոր ներդրողների մասնակցությունից (30%)	20%	20%	կիրառելի չէ
Աշխատողների թվի աճի կանխատեսում ներդրումային ժամկետի ավարտին (ներկայացված է աշխատողների թիվը ներդրումային ժամկետի ավարտին և տոկոսային աճը ժամկետի սկզբի համեմատությամբ)	61 (610%)	61 (610%)	33 (330%)
Ընդհանուր հարկեր՝ ներդրումային ժամկետի ընթացքում (6 տարի) (ԱՄՆ դոլար)	0	24 550 060	13 036 563
Հարկեր՝ ներդրումային ժամկետի ավարտից հետո (7-րդ տարում) (ԱՄՆ դոլար)	45 483 166	15 478 265	5 799 498
Ընդհանուր հարկային եկամուտներ ներդրումային ժամկետի (6 տարի) ընթացքում և դրան հաջորդող 7-րդ տարում (ԱՄՆ դոլար)	45 483 166	40 028 325	18 836 061

Աղյուսակը մշակվել է հեղինակի կատարած հետազոտության և հաշվարկների հիման վրա

Աղյուսակ 3-ում երևում է, որ ներդրումների շահութաբերությունից բացի, ներդրումային ժամկետի ավարտին հաջորդող 7-րդ տարում ակնկալվող հարկային

եկամուտներն ավելի մեծ են (մոտ 45,5 մլն ԱՄՆ դոլար), քան հարկային արտոնություններ չտրամադրելու դեպքում վճարվող ընդհանուր հարկերը (մոտ 40 մլն ԱՄՆ դոլար): Նաև՝ հարկային արտոնությամբ ներդրումային գործարքները ենթադրում են երկարաժամկետ ոչ ֆինանսական օգուտներ, մասնավորապես՝ կապիտալի ներհոսք տնտեսության մեջ, նոր աշխատատեղերի ստեղծում, արտահանման ծավալների ավելացում, Հայաստանի՝ որպես կայացած տեխնոլոգիական հանգույցի ճանաչում, հայկական ստարտափ էկոհամակարգի հեղինակության բարձրացում միջազգային մակարդակով, միջազգային լուրջ վենչուրային հիմնադրամների ներկայություն Հայաստանում և այլն: Հարկային արտոնությունների չտրամադրման պարագայում պետության կողմից ներդրված գումարի շահութաբերությունը մեծանում է (20%), սակայն ընկերությունների աճի տեմպը հարկեր վճարելու արդյունքում նվազում է, և հարկերից ակնկալվող եկամուտները՝ նույնպես: Իսկ ստարտափ ընկերությունների բնականոն զարգացման դեպքում ենթադրվել է, որ ընկերությունը բարձր աճի տեմպ չի ունենա և չի կարողանա ավելի բարձր եկամտաբերություն ու հարկային եկամուտներ ապահովել: Կատարված հաշվարկներն, այսպիսով, ցույց են տալիս, որ հայկական ստարտափ ընկերություններում պետության և միջազգային խոշոր վենչուրային ֆոնդերի համատեղ մասնակցությամբ ներդրումները և ներդրումային ժամկետի ընթացքում տրամադրվող հարկային արտոնությունները միասին ավելի արդյունավետ են և կխթանեն վենչուրային կապիտալի ոլորտի զարգացումը Հայաստանում:

Հայկական ստարտափ ընկերությունների խնդիրների բացահայտման նպատակով անցկացվել է հարցում տարբեր ոլորտներում գործող ստարտափ ընկերությունների շրջանում[28]: Հարցաշարի համար հիմք են հանդիսացել Աղյուսակ 1-ում բերված էկոհամակարգային բովանդակային ուղղությունները: Հարցվել են ինչպես գաղափարի փուլում գտնվող, այնպես էլ՝ գրանցված և գործող ստարտափ ընկերություններ, որոնք հիմնադրվել են 2011-ից 2022 թվականներն ընկած ժամանակահատվածում:

Հարցման արդյունքների վերլուծությունից պարզ է դարձել, որ Հայաստանի ստարտափ էկոհամակարգի զարգացումը համաչափ չէ, այն կենտրոնացած է առավելապես Երևան քաղաքում (հարցված ընկերությունների 94%-ի գրանցման վայրը ՀՀ-ում Երևանն է, և միայն 6%-ը գրանցված է Գյումրիում): Բացի այդ, հայկական ստարտափ ընկերությունները Հայաստանը և Հայաստանի ստարտափ էկոհամակարգը բիզնեսի զարգացման համար նպաստավոր վայր չեն համարում, ինչի մասին է խոսում այն, որ տեղական ստարտափ էկոհամակարգում ստարտափ ընկերությունները գրանցվում են ամենաշատը հայրենասիրության գործոնից դրդված

[28] Հարցման ընտրանքի համար կազմվել է հայկական ստարտափ ընկերությունների ընդհանուր ցանկ: Քանի որ Հայաստանում ստարտափ ընկերությունների վերաբերյալ պաշտոնական հրապարակային վիճակագրություն և միասնական ռեեստր գոյություն չունի, տվյալների հավաքագրման համար հիմք են հանդիսացել Հայաստանի ինկուբացիոն և աքսելերացիոն տարբեր ծրագրերի, դրամաշնորհային մրցույթների, տեխնոլոգիական միջոցառումների, հրեշտակ-ներդրողների ակումբների, վենչուրային հիմնադրամների, Crunchbase և Startupblink կայքերի շտեմարանների տվյալները: Crunchbase և Startupblink կայքերում որոնումը կատարվել է այն ստարտափ ընկերությունների շրջանում, որոնց գտնվելու և (կամ) գործունեության վայրը նշված էր Հայաստան: Ցանկում ընդգրկվել է ընդհանուր թվով 137 ընկերություն: Այնուհետև, կատարվել է պարզ պատահական ընտրանք՝ կազմված 68 ընկերությունից, սահմանային սխալը չի գերազանցում 5% նշանակալիության շեմը:

(62%): Արտերկրում գրանցվելու և գործունեություն ծավալելու առաջնային նպատակը ներդրումների ներգրավումն է (65%), ինչն ըստ հարցված ընկերությունների՝ պայմանավորված է հայկական ստարտափ էկոհամակարգում սաղմնային փուլից բարձր փուլերի ներդրում կատարող ֆոնդերի կամ ծրագրերի պակասով: Արտերկրում գրանցվելու երկրորդ պատճառը, ըստ հարցվածների 46%-ի, շուկա մուտք գործելու հնարավորությունն է, քանի որ Հայաստանից արտերկրի շուկայի ուսումնասիրություն կատարելը կամ շուկա մուտք գործելն իրատեսական չէ:

Մարդկային ռեսուրսներին առնչվող ամենալուրջ խնդիրը ՀՀ ստարտափ էկոհամակարգում տեխնիկական մասնագիտացումներով որակյալ մասնագետների պակասն է (63%): Հարցված ընկերությունները համարում են, որ այս խնդրի բուն պատճառը ոչ որակյալ կրթությունն է Հայաստանում:

Ֆինանսավորմանն առնչվող հարցերում ամենամեծ խնդիրը Հայաստանի ստարտափ էկոհամակարգում ֆինանսավորման միջոցների անբավարարությունն է (33%): Հարցման տվյալներով՝ ավելի մեծ թիվ են կազմում դրամաշնորհ ստացած ստարտափ ընկերությունները (65%), և համեմատաբար ավելի քիչ են հրեշտակ ներդրողների ու վենչուրային հիմնադրամների ներդրումների տեսքով ֆինանսավորում ստացած ստարտափ ընկերությունները (համապատասխանաբար 19% և 9%): Ապագա ֆինանսավորման համար հարցված ընկերությունների կեսից ավելին (56%) նախընտրում է դիմել միջազգային վենչուրային հիմնադրամներին, քանի որ Հայաստանում, ինչպես նշել են, բացակայում են միջազգային խոշոր վենչուրային հիմնադրամները, կամ տեղական հիմնադրամներն ի վիճակի չեն ավելի մեծ ներդրումներ կատարել:

Բիզնեսի զարգացմանը խոչընդոտող խնդիրներից ամենաառաջնայինը օրենսդրական թերակարգավորումներն են: Մասնավորապես՝ նշվում է ՀՀ-ում էլեկտրոնային առևտրի կարգավորման օրենքի բացակայությունը, ինչը դժվարացնում է Հայաստանից արտադրանքի և ծառայությունների էլեկտրոնային վաճառքը դեպի այլ երկրներ: Ստարտափ ընկերության հիմնադիրների մոտ բիզնես վարելու գիտելիքի և հմտությունների պակասը, ըստ հարցման մասնակիցների, երկրորդ ամենատարածված խնդիրն է (35%):

Ընդհանուր էկոհամակարգային խնդիրներից հատկապես մեծ նշանակություն ունի հայկական ստարտափ էկոհամակարգի թույլ զարգացվածությունը և ցածր հեղինակությունը միջազգային մակարդակում (37%), ինչպես նաև ձեռներեցական ստեղծարար մտածելակերպի պակասը Հայաստանում (35%): Նաև՝ հարցված ընկերությունների 22%-ը գտնում է, որ Հայաստանում բացակայում է ստարտափ էկոհամակարգի զարգացման ռազմավարությունը:

Հայկական ստարտափ ընկերությունների հարցման արդյունքներով բացահայտված առաջնային խնդիրները տե՛ս Գծապատկեր 1-ում.



Գծապատկեր 1. Հայկական ստարտափ ընկերությունների հարցման արդյունքում բացահայտված առաջնային խնդիրները: Գծապատկերը մշակվել է հեղինակի կողմից

Հարցման միջոցով ստացված տվյալների կոռելյացիոն և գործոնային վերլուծության արդյունքում կատարվել են հետազոտության համար կարևոր հետևություններ.

- Հայաստանի ստարտափ ընկերությունների զարգացման համար խոչընդոտ է հարկային խթանների բացակայությունը կամ դրանց ոչ բավարար նպաստավորությունը,
- հիմնադիրների բիզնեսը վարելու հմտությունների և նախկին փորձի պակասը զգալի խոչընդոտող ազդեցություն ունեն ստարտափ ընկերության զարգացման վրա,
- հայկական ստարտափ էկոհամակարգի ցածր հեղինակության և թույլ զարգացվածության պատճառով մեծ չէ օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ստարտափ ընկերությունների թիվը, ինչը չի նպաստում ստարտափ ընկերությունների ընդլայնմանը և միջազգային շուկաներում գործունեություն ծավալելուն,
- Հայաստանի ստարտափ էկոհամակարգը չի ստեղծում բավարար պայմաններ ստարտափի զարգացման հաջորդ փուլերի, մասնավորապես՝

համաշխարհային շուկայում աճելու և ելք գրանցելու համար, ինչն էլ ուղղորդում է ստարտափ ընկերություններին տեղափոխվել արտերկիր կամ կանգնեցնում է աճը,

- ստարտափ ընկերությունների աշխատակիցների փոքր թիվը հիմնականում պայմանավորված է աշխատաշուկայում որակյալ աշխատուժի պակասով,
- ստարտափ ընկերությունների հիմնադիրների բիզնեսը վարելու հմտությունների պակասը, ինչպես նաև մենթոր կամ խորհրդատու չունենալու հանգամանքն զգալիորեն ազդում են ներգրավված ֆինանսական միջոցների չափի վրա, ինչպես նաև կարևոր են եկամուտ ստեղծելու և այն ավելացնելու հարցում,
- Հայաստանի ստարտափ էկոհամակարգում կազմակերպվող ստարտափային միջոցառումների փոքր հաճախականությունը չի նպաստում մենթոր կամ խորհրդատու ունենալուն:

Ատենախոսության «**Եզրակացություններ**» բաժնում ի մի են բերվել հետազոտության հիմնական արդյունքները, և ձևակերպվել են եզրահանգումներն ու հիմնական առաջարկությունները.

1. Ուսումնասիրելով ստարտափ ընկերությունների գիտական և փորձագիտական սահմանումները, բնութագրիչ առանձնահատկությունները, կենսափուլերը և ֆինանսավորման շրջափուլերը՝ տրվել է ստարտափ ընկերության ամփոփ սահմանումը, համաձայն որի *ստարտափ ընկերությունը գերարագ աճի ներուժով, զարգացման փարանջատված փուլերով նորարարական բիզնես-նախաձեռնություն է, որը գործելով ռիսկային պայմաններում՝ աշխատում է սեփական բիզնես-մոդելի անընդհատ կատարելագործման ուղղությամբ, մեծապես կախված է մասնավոր կապիտալից և ծախողման բարձր հավանականություն ունի:*

2. Ստարտափ էկոհամակարգերի բաղադրիչների և բովանդակային առանձնահատկությունների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ստարտափ ընկերությունների ձևավորման և զարգացման վրա մեծ ազդեցություն ունեն հետևյալ բովանդակային ուղղությունները՝ *կրթությունը, մարդկային ռեսուրսները, ֆինանսավորումը, պետական աջակցությունը, բարենպաստ միջավայրը, ձեռներեցական մշակույթը*:

3. Ուսումնասիրությամբ հստակեցվել է ստարտափ ընկերությունների դերը որպես տնտեսական աճի խթանիչներ: Նրանք, մասնավորապես՝

- իրենց ստեղծած արտադրանքով կամ ծառայությամբ խթանում են նորարարությունը և նպաստում գիտելիքի ստեղծմանն ու գիտահեն տնտեսության զարգացմանը,
- նպաստում են ձեռնարկատիրական մշակույթի տարածմանը,
- ստեղծելով աշխատատեղեր՝ նպաստում են գործազրկության կրճատմանը,
- ներդրումներ ներգրավելու շնորհիվ նպաստում են կուտակված կապիտալի շրջանառությանը և արդյունավետ օգտագործմանը, իսկ ելքերի շնորհիվ նաև խթանում են բորսաների ակտիվությունը,
- զգալի ազդեցություն են գործում ընդհանուր աշխատուժի որակի բարձրացման վրա,

- խթանում են մրցակցությունը:

4. Ստարտափ ձեռներեցության ոլորտի համաշխարհային զարգացումների ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ ոլորտում միտումներն ավելի շատ անկումային են, նկատվում է ինչպես ներդրումային գործարքների թվի և գումարների, այնպես էլ հաջողված ստարտափ ընկերությունների թվի նվազում: Նկատվում է նաև միաեղջյուր և բազմաեղջյուր ընկերությունների իրական արժեքների նվազում, քանի որ դրանք ավելի շուտ վենչուրային կապիտալի ներդրումների հաշվին «աճեցված» արժեքով ընկերություններ են, և ներդրումային գործարքների թվի ու գումարների նվազման պարագայում դադարում են այդպիսին լինելուց: Այդ պատճառով ներկայում շեշտը դրվում է այդ ընկերությունների արժեքի իրական մեծացման և կայուն շահութաբերության հասնելու վրա: Նշված անկումային միտումներն ազդեցություն են ունեցել նաև հայկական ստարտափ ընկերությունների վրա, որոնք հատկապես տուժել են ինչպես երկրում տիրող քաղաքական և անվտանգային անկայուն վիճակից, այնպես էլ ընդհանուր գնաճից, արտարժույթի փոխարժեքի տատանումներից:

5. Ստարտափ էկոհամակարգերի վարկանշավորման միջազգային գնահատականների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ստարտափ էկոհամակարգի զարգացվածության տեսանկյունից համաշխարհային առաջատարի դիրքերում են և շարունակում են պահպանել այդ դիրքերը ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան Իսրայելը, ինչպես նաև Շվեդիան և Կանադան, որոնք ունեն էկոհամակարգի զարգացվածության ամենաբարձր ցուցանիշները գրեթե բոլոր գործոններով: Հայաստանը ներկայումս Կովկասի առաջատար էկոհամակարգն է և տարեցտարի բարելավում է իր դիրքը ստարտափ էկոհամակարգերի միջազգային վարկանշային գնահատումներում: Առաջընթաց է գրանցել նաև Հայաստանի միակ գլխավոր ստարտափ հանգույցը՝ Երևանը, որն առաջին անգամ մուտք է գործել աշխարհի 250 քաղաքների ցանկ՝ զբաղեցնելով 221-րդ տեղը աշխարհի 1000 քաղաքների ցանկում:

6. Հայաստանի ստարտափ էկոհամակարգի ներկայիս առաջատար դիրքի պահպանմանն ուղղված քայլեր ձեռնարկելու և հետագա զարգացումը խթանելու նպատակով կատարվել է էկոհամակարգի բովանդակային բաղադրիչների վերլուծություն, որը ցույց է տվել, որ Հայաստանում ստարտափ էկոհամակարգի կայուն զարգացման համար բավարար չէ տարեկան ստեղծվող ստարտափ ընկերությունների թիվը: Հայաստանի ստարտափ էկոհամակարգն ունի ընդամենը մեկ «միաեղջյուր» ընկերություն, իսկ ցուցակման միջոցով ելք գրանցած ընկերություններ չկան: Խիստ փոքր է գնման/միաձուլման միջոցով ելք գրանցած ընկերությունների թիվը: Հայաստանում ներկայացված չեն վերազգային ընկերությունների մասնաճյուղեր, որոնք կնպաստեն երկրում ստարտափ ձեռնարկատիրության տարածմանը, գիտելիքի և փորձի փոխանակմանը: Էկոհամակարգում առկա է ստարտափ ընկերություններին անհրաժեշտ մարդկային ռեսուրսների զգալի պակաս, ինչը հիմնականում պայմանավորված է կրթության ոչ բավարար որակով: Բուհերը բավարար չափով չեն նպաստում ստարտափ ձեռնարկատիրության ուսուցմանը, քանի որ մեծ մասը չունի կից գործող ինկուբատոր և (կամ) աքսելերացիոն ծրագրեր: Չափազանց քիչ են այն ստարտափ-գաղափարները, որոնք հիմնված են գիտահետազոտական փորձար-

կումների և մշակումների վրա, ինչը կարևոր է նորարարության խթանման և գլոբալ ազդեցության նախագծեր ունենալու, ինչպես նաև ստարտափ ընկերության արժեքի մեծացման տեսանկյունից:

7. Ֆինանսավորման առումով Հայաստանի ստարտափ էկոհամակարգում քիչ են ներդրումային գործարքները և բացակայում մեծ գումարի ներդրումները տեղական ֆոնդերի կողմից: Արդյունքում տեղի է ունենում հայկական ստարտափ ընկերությունների արտահոսք դեպի ավելի զարգացած էկոհամակարգեր: Օտարերկրյա վենչուրային կապիտալիստների համար գրավիչ չէ Հայաստանի ներդրումային միջավայրը: Օրենսդրական դաշտը Հայաստանում, թեև ընդհանուր առմամբ նպաստավոր է վենչուրային կապիտալի ներդրումների համար, սակայն կան որոշ խնդիրներ: Վենչուրային կապիտալի ոլորտի միջազգային փորձի ուսումնասիրությունից պարզ է դարձել նաև, որ ոլորտի զարգացման համար էական նշանակություն ունի պետության աջակցությունը: Այդ նպատակով կատարվել է Հայաստանում վենչուրային ներդրումների գործարքներում պետության և միջազգային խոշոր վենչուրային ֆոնդի համատեղ մասնակցության սցենարային վերլուծություն, հաշվարկվել և հիմնավորվել են ներդրում ստացող ստարտափ ընկերություններին հարկային արտոնությունների տրամադրման հնարավորությունը և արդյունավետությունը, որը կխթանի վենչուրային կապիտալի ոլորտի զարգացումը երկրում: Հաշվարկը ցույց է տվել, որ պետության և մասնավոր ֆոնդի համատեղ մասնակցության համար նախընտրելի է համապատասխանաբար 70% և 30% հարաբերակցությունը, որը հարկային արտոնությունների տրամադրման պարագայում մասնավոր ներդրողների համար ապահովում է 20% շահութաբերություն, ինչը բավարար արդյունք է մասնավոր ներդրողների տեսանկյունից գործարքը շահավետ համարելու համար, իսկ պետության համար ապահովում է 14% շահութաբերություն, ինչը զուտ ֆինանսական տեսանկյունից բարձր ցուցանիշ չէ, սակայն շահավետ է երկարաժամկետ հատվածում՝ ներդրումային ժամկետի ավարտից հետո ակնկալվող հարկային եկամուտների և վենչուրային կապիտալի ոլորտի զարգացումը խթանող ոչ ֆինանսական օգուտների տեսանկյունից:

8. Ստարտափ էկոհամակարգերի հասունության գնահատման մոդելի գործոնների և դրանց համար պահանջվող ցուցանիշների ուսումնասիրության և Հայաստանի ստարտափ էկոհամակարգի բովանդակային բաղադրիչների վերլուծության հիման վրա կատարվել է հայկական ստարտափ էկոհամակարգի հասունության մակարդակի գնահատում, դուրս են բերվել ստարտափ էկոհամակարգի հասունությանը խոչընդոտող գործոնները: Գործոնների մեծ մասով Հայաստանի ստարտափ էկոհամակարգը չորս մակարդակներից առաջին՝ *M1 ձևավորվող* մակարդակում է, թեև առանձին գործոնների, մասնավորապես՝ մեդիայի առկայության ցուցանիշով համապատասխանում է M2 զարգացող, իսկ էկոհամակարգի հետազոտական տվյալների և ձեռնարկատերերի սերունդների ցուցանիշով՝ M3 հասուն մակարդակներին: Սակայն պետք է նշել, որ Հայաստանի ստարտափ էկոհամակարգի հասունությունը որոշ պարտադիր գործոններով, մասնավորապես՝ տարեկան ստեղծվող ստարտափ ընկերությունների թվի, բուհերում ձեռնարկատիրության և ձեռնարկատիրական արժեհամակարգի գործոններով ունի բավական

ցածր ցուցանիշներ և լիարժեքորեն չի համապատասխանում անգամ M1 ձևավորվող մակարդակին, ինչի համար անհրաժեշտ է ձեռնարկել միջոցառումներ էկոհամակարգի հասունությունն M1 ձևավորվող մակարդակում ամրապնդելու և հաջորդ՝ M2 զարգացող մակարդակ անցում կատարելու համար:

9. Հայկական ստարտափ ընկերությունների շրջանում անցկացված հարցման տվյալների վերլուծությունը ցույց է տվել, որ թեև ստարտափ էկոհամակարգը Հայաստանում տարեցտարի աճ է գրանցում, սակայն տարածքային ոչ համաչափ զարգացման պատճառով այն չի նպաստում ստարտափ ընկերությունների թվի ավելացմանը և չի խթանում ստարտափ ձեռներեցության մշակույթի տարածումն ամբողջ երկրում, իսկ էկոհամակարգի ընդհանուր զարգացածությունը բարենպաստ միջավայր չի ապահովում ստարտափ ընկերությունների գործունեության ընդլայնման համար: Բացի այդ, ստարտափ էկոհամակարգում առկա է որակյալ աշխատուժի զգալի պակաս, ինչը բարձր աշխատավարձերի հետ միասին դժվարացնում է որակյալ մասնագետներից կազմված թիմի ստեղծումը՝ որպես ստարտափ ընկերության հաջողության կարևոր գործոն: Բուհական կրթության ոչ բավարար մակարդակը, օտարերկրացի աշխատողների ներուժի ոչ բավարար չափով օգտագործումը նույնպես նպաստավոր չեն ստարտափ ընկերությունների գործունեության համար: Ֆինանսավորման առումով չկան բավարար ֆինանսական միջոցներ, հատկապես՝ սաղմնայինից բարձր փուլերի ներդրումների համար, միջազգային խոշոր ներդրումային հիմնադրամները չեն գործում էկոհամակարգում, իսկ ստարտափ ընկերությունների հիմնադիրները մեծ մասամբ չունեն գաղափարի ներկայացման, ինչպես նաև բիզնեսի գրագետ վարման հմտություններ: Մենթորների ընդհանուր ցանցի բացակայությունը նույնպես դիտվել է որպես կարևոր խնդիր, ինչի արդյունքում ստարտափ ընկերությունները հնարավորություն չեն ունենում հաղորդակցվելու և (կամ) համագործակցելու հաջողության հասած ձեռնարկատերերի հետ:

10. Հարցման տվյալների մշակմամբ կատարված կոռելյացիոն և գործոնային վերլուծությունների արդյունքում եզրակացվել է, որ ստարտափ ընկերությունների զարգացմանը խոչընդոտող էական գործոններ են .

- հարկային խթանների բացակայությունը կամ դրանց ոչ լիարժեք նպաստավորությունը,
- հիմնադիրների բիզնեսը վարելու հմտությունների և նախկին փորձի պակասը,
- հայկական ստարտափ էկոհամակարգի ցածր հեղինակության և թույլ զարգացվածության հետևանքով օտարերկրյա բաժնեմասնակցությամբ ստարտափ ընկերությունների փոքր թիվը,
- ստարտափի զարգացման հաջորդ փուլերի, մասնավորապես՝ համաշխարհային շուկայում աճելու և ելք գրանցելու համար ոչ նպաստավոր պայմանները Հայաստանի ստարտափ էկոհամակարգում,
- ստարտափ ընկերությունների աշխատակիցների ոչ մեծ թիվը՝ պայմանավորված աշխատաշուկայում որակյալ աշխատուժի պակասով,
- ներգրավված ֆինանսական միջոցների փոքր չափը, ինչպես նաև եկամուտ ստեղծելու և այն ավելացնելու խնդիրները՝ պայմանավորված ստարտափ

ընկերությունների հիմնադիրների բիզնեսը վարելու հմտությունների պակասով և մենթոր կամ խորհրդատու չունենալու հանգամանքով,

- մենթոր կամ խորհրդատու չունենալու հանգամանքը՝ պայմանավորված Հայաստանի ստարտափ էկոհամակարգում կազմակերպվող ստարտափային միջոցառումների փոքր հաճախականությամբ:

Հիմք ընդունելով ատենախոսության շրջանակում կատարված հետազոտությունների արդյունքները՝ ներկայացվում են հետևյալ առաջարկությունները վերոնշյալ խնդիրների լուծման ուղղությամբ.

- Առաջարկվում է մարզերում խթանել ստարտափ գաղափարների ձևավորման ակտիվությունը և խրախուսել ստարտափ ընկերությունների ստեղծումը՝ կատարելով ստարտափ ձեռներեցության քարոզչություն, իրականացնելով գիտելիքի և փորձի փոխանակման միջոցառումներ, դրամաշնորհային և ինկուբացիոն ծրագրեր: Միաժամանակ առաջարկվում է բուհերում ներդնել ստարտափ ձեռներեցության դասընթացներ և բուհերին կից բացել ստարտափ ինկուբատորներ, աքսելերացիոն ծրագրեր ու գաղափարների գեներացման լաբորատորիաներ: Առաջարկվող միջոցառումները կնպաստեն գաղափարների որակի բարձրացմանը և տարեկան ստեղծվող ստարտափ ընկերությունների թվի ավելացմանը, կխթանեն ձեռնարկատիրությունը բուհերում և ձեռնարկատիրական մտածողության ու արժեհամակարգի տարածումը, ինչը թույլ կտա ամրապնդել ստարտափ էկոհամակարգի հասունությունն M1 ձևավորվող մակարդակում և բարելավել հասունության գործոններով բացահայտված ցուցանիշները, ինչպես նաև՝ ստեղծել նախապայմաններ հաջորդ մակարդակ անցում կատարելու համար:
- Առաջարկվում է ձեռնարկել ֆինանսական միջոցների անբավարարության խնդիրը լուծելու միջոցառումներ, մասնավորապես՝ ակտիվացնել Ազգային վենչուրային ֆոնդի գործունեությունը և հրավիրել խոշոր միջազգային վենչուրային հիմնադրամներին գործունեություն ծավալել Հայաստանում, ներգրավել պետությանը՝ համատեղ մասնակցություն ունենալու հայկական ստարտափ էկոհամակարգի ընկերություններում կատարվող ներդրումային գործարքներում և պետության մասնակցությամբ ներդրումներ ստացած ստարտափ ընկերությունների համար սահմանել համապատասխան հարկային արտոնություններ: Ներդրումներ ստացած և հեռանկարային ստարտափ ընկերությունների համար ստեղծել կարողությունների և գիտելիքի կատարելագործման հնարավորություններ՝ ապահովելով մասնակցություն ոլորտային ցուցահանդեսներում, համաժողովներում և գիտաժողովներում, մասնակցություն մասնագիտական կատարելագործման որակյալ միջազգային դասընթացներին, հասանելիություն կարևոր առցանց գրադարաններին և համանման այլ ռեսուրսներին: Առաջարկվող միջոցառումները թույլ կտան ոչ միայն լուծել ֆինանսական միջոցների անբավարարության խնդիրը, այլև նպաստել Հայաստանում վենչուրային կապիտալի ոլորտի զարգացմանը և ներդրումային միջավայրի գրավչության բարձրացմանը:

- Հարցման արդյունքներով բացահայտված խնդիրների լուծման նպատակով, ի թիվս վերը թվարկված լուծումների, առաջարկվում է կատարել ստարտափ ընկերություններին անհրաժեշտ կադրերի և նրանց որակավորմանն ու մասնագիտացումներին առնչվող կարիքների գնահատում ու դրա հիման վրա կատարել բուհական ծրագրերի համապատասխանեցում, ինչպես նաև նոր ծրագրերի մշակում, ինչը թույլ կտա լուծել աշխատուժին առնչվող քանակական և որակական խնդիրը: Հայկական ստարտափ էկոհամակարգում ելքեր գրանցելու համար առաջարկվում է խթանել հաջողության հասած ստարտափ ընկերությունների ցուցակումը ֆոնդային բորսաներում, այդ թվում՝ Հայաստանի ֆոնդային բորսայում՝ միևնույն ժամանակ ստեղծելով մենթորական ցանց և դրանում ներգրավելով ինչպես տեղական, այնպես էլ սփյուռքի և միջազգային հաջողակ ձեռնարկատերերին: Հայկական ստարտափ էկոհամակարգի զարգացումը խթանելու նպատակով առաջարկվում է մշակել էկոհամակարգի զարգացման ռազմավարություն պետության մասնակցությամբ, իսկ ստարտափ էկոհամակարգի հեղինակությունը միջազգային մակարդակով բարձրացնելու համար առաջարկվում է ապահովել ստարտափ ոլորտին առնչվող միջազգային խոշոր միջոցառումների անցկացումը Հայաստանում՝ հրավիրելով դրանցում մասնակցություն ունենալ ստարտափ ձեռնարկատիրության ոլորտում միջազգային հեղինակություն ունեցող ինչպես հայկական ծագմամբ, այնպես էլ օտարերկրացի մենթորների, խոսնակների, վենչուրային կապիտալիստների և այլ դերակատարների, որոնց շնորհիվ հայկական ստարտափ ընկերությունները կիրազեկվեն նաև ստարտափ ձեռնարկատիրության ոլորտում առկա միջազգային զարգացումների մասին:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են հեղինակի հետևյալ գիտական աշխատություններում.

1. Arshakyan K. (2020). Startups: Contemporary Forms And Challenges, Bulletin Of High Technology, V. 3(14), pp. 95-102
2. Արշակյան Ք. (2022), Հայկական ստարտափ էկոհամակարգի բաղադրիչային ազդեցությունները և զարգացման խնդիրները, Գիտական Արցախ, N3(14), էջեր 204-222
3. Արշակյան Ք. (2022), Վենչուրային կապիտալի ոլորտի զարգացման խնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Բանբեր Երևանի պետական համալսարանի. տնտեսագիտություն, N 1 (40), էջեր 16-29
4. Аршакян К. (2023), Государственная поддержка в контексте развития сектора венчурного капитала Армении, Регион и Мир, том XIV, №22, стр. 140-146
5. Արշակյան Ք. (2023), Հայկական ստարտափ էկոհամակարգի հասունության գնահատումը, Հանրային կառավարում 1/2023, էջեր 94-106
6. Arshakyan K. (2023), Challenges Of Armenian Startup Companies: Analysis of Survey Findings, Economics, Finance and Accounting N2(12), pp. 16-34

АРШАКЯН КРИСТИНЕ РАЗМИКОВНА

ПРОБЛЕМЫ РАЗВИТИЯ СТАРТАПОВ И СОВРЕМЕННЫЕ ПОДХОДЫ В РА

Диссертация представлена на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.02 – “Экономика и управление народным хозяйством и его отраслями”.
Защита диссертации состоится 7-го июня 2024 года в 13^{30} на заседании Специализированного совета по экономике 015 Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего в Ереванском государственном университете, по адресу: 0025, ул. Х. Абовяна 52, г. Ереван, РА.

Р Е З Ю М Е

Стартапы являются движущей силой современной экономики, поскольку обладают потенциалом к быстрому росту, созданию новых рабочих мест и быстрой трансформации в крупные компании. Этот стремительный рост обусловлен инновационным характером продукции и услуг стартапов, что является ключевым фактором для повышении производительности и улучшении конкурентоспособности.

Стартапы могут сыграть важную роль также в развитии экономики Армении, при условии создания благоприятной среды для их развития. Хотя армянские стартапы демонстрируют значительные успехи на мировой арене, они все еще сталкиваются с рядом проблем внутри стартап-экосистемы, которая не обеспечивает достаточной поддержки для их устойчивого развития. Кроме того, нет достаточных исследований, посвященных проблемам стартапов и стартап-экосистемы в Армении, что затрудняет разработку эффективных политик развития. Изучение особенностей и проблем развития стартап-компаний в Армении позволит разработать соответствующую политику, способствующую созданию благоприятной среды для стартап-компаний и распространению стартап-предпринимательства в стране.

Основной целью диссертации является выявление проблем развития армянских стартап-компаний и предложение путей их решения. Для достижения поставленной цели в диссертации были намечены **следующие задачи**:

- изучуть теоретические концепции стартап-предпринимательства и стартап-компаний, уточнить понятие стартапа, выделить его ключевые характеристики и этапы развития, а также выявить значимость стартап-экосистем и их компонентов для деятельности и развития стартап-компаний,
- исследовать роль стартап-компаний в развитии экономики,
- проанализировать тенденции развития стартап-компаний и провести оценку международного опыта в данной области,
- оценить текущее состояние стартап-экосистемы в Республике Армения, проанализировать влияние государственной политики, правовой и законодательной среды на стартап-компании, а также оценить влияние компонентов стартап-экосистемы на развитие армянских стартапов,
- выявить и подробно изучить существующие проблемы стартап-компаний на основе анализа данных, полученных из опросов созданных и действующих в Армении стартап-компаний,
- разработать соответствующие рекомендации, направленные на решение выявленных проблем.

Объектом исследования являются стартап-компании и стартап-экосистема Армении, а также процессы, связанные со сферой стартап-предпринимательства, **предметом исследования** являются проблемы стартап-компаний в Армении, их выявление и пути решения.

В первой главе рассмотрены определения, используемые в научной литературе, а также основные характеристики стартап-компаний, представленные в них. На основе этого анализа было сформулировано обобщенное определение стартап-компании. Были проанализированы компоненты стартап-экосистемы и их влияние на деятельность стартап-компании, а также исследована роль стартап-компаний как катализаторов экономического роста.

Во второй главе была произведена сравнительная оценка ведущих стартап-экосистем мира и региональных стартап-экосистем, а также исследованы собенности позиционирования армянской стартап-экосистемы.

В третьей главе исследованы отдельные компоненты стартап-экосистемы Армении, оценен текущий уровень ее зрелости. Проанализировано текущее состояние развития венчурного сектора в Армении, рассчитана эффективность инвестиционных сделок при государственном софинансировании и предоставлении налоговых льгот. Проанализированы результаты опроса, проведенного среди армянских стартап-компаний, на основе которого выявлены взаимосвязи проблем, а также факторы воздействия на их деятельность.

Среди результатов анализов и исследований, проведенных в диссертации, **научной новизной** можно считать:

- В результате комплексного анализа стартап-экосистемы Армении была определена степень ее зрелости и установлено, что экосистема находится на первом из четырех уровней зрелости - *уровне M1*, а также были проанализированы возможности перехода на следующий уровень зрелости экосистемы.
- В результате расчетов обоснована эффективность совместного участия государства и иностранных венчурных фондов в инвестиционных сделках, а также предоставления стартап-компаниям налоговых льгот при получении инвестиции. Было определено оптимальное процентное соотношение участия государства и частного венчурного фонда, которое обеспечивает высокий уровень доходности и нефинансовые выгоды в долгосрочной перспективе.
- На основании анализа данных опроса среди стартапов Армении были выявлены основные проблемы в соответствии с ключевыми направлениями экосистемы, которые препятствуют развитию как самих стартапов, так и экосистемы.
- Путем обработки данных опроса был проведен корреляционный анализ, в результате которого были выявлены взаимосвязи между проблемами, а также сделаны выводы относительно выявленных проблем. Факторы, оказывающие наибольшее влияние на развитие стартап-компаний, были выявлены и сгруппированы с помощью факторного анализа, что позволило выделить основные факторы.

KRISTINE RAZMIK ARSHAKYAN

PROBLEMS IN STARTUP DEVELOPMENT AND CONTEMPORARY APPROACHES IN THE RA

The abstract of the dissertation is submitted for pursuing the degree of Ph.D. in Economics in the field 08.00.02 - "Economy, the economics of its spheres and control".
The defense of the dissertation will take place at 13^{30} on June 7, 2024 at the Meeting of Specialized Council 015 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia acting at the Yerevan State University.
Address: 52 Abovyan Street, Yerevan, 0025, RA.

ABSTRACT

Startups are drivers of the modern economy due to their potential for rapid growth, job creation, and the possibility to evolve into large enterprises. This potential for rapid growth stems from the innovations in products and services they offer, which is an important factor not only for increasing the productivity but also for ensuring competitiveness.

In the context of the Armenian economy, startups hold significant promise, provided they operate within a conducive environment. Despite the achievements of Armenian startups on the global stage, they encounter various challenges within the domestic startup ecosystem, hindering their sustainable growth. Moreover, the lack of comprehensive research on these challenges compounds the issue, making it difficult to develop effective policies and strategies for ecosystem progress. Thoroughly studying the problems faced by startups in Armenia is imperative. This research will enable the formulation of targeted policies aimed at fostering a supportive ecosystem for startup companies, thus fostering widespread entrepreneurial activity throughout the country.

The main purpose of the dissertation is to identify challenges of the Armenian startup companies and offer ways for their solution. To achieve the above-mentioned purpose, **the following objectives were set and addressed in the dissertation**:

- study the theoretical concepts of startup entrepreneurship and startup companies, clarify the core concept of a startup while highlighting its key characteristics and stages of development, identify the significance of startup ecosystems and their components in fostering the operation and growth of startup companies;
- study the pivotal role that startup companies play in driving economic development;
- analyze the evolving trends in startup development and evaluate global experiences within this domain;
- evaluate the present state of Armenia's startup ecosystem, analyze the impact of governmental policies and the legislative framework on startup enterprises, assess the impact of various components of the startup ecosystem on the progression of Armenian startups;
- identify and study in detail the existing challenges faced by startup enterprises through the analysis of survey data obtained from Armenian startups;
- propose recommendations aimed at resolving the identified issues.

The object of this research is startup companies and the startup ecosystem within Armenia, along with the associated processes within the startup entrepreneurship sector. **The subject of the research** is the problems of startup companies in Armenia, their identification and ways of solution.

The first chapter examines the definitions used in scientific literature regarding startup companies and their key characteristics. Based on this analysis, a summarized definition of a startup company is concluded. Furthermore, the components of the startup ecosystem and their impact on the operation of a startup company were analyzed, as well as the role of startup companies as catalysts for economic growth was explored.

In the second chapter, an comparative analysis was conducted to evaluate both global leading startup ecosystems and regional ecosystems. Additionally, the unique positioning characteristics of the Armenian startup ecosystem were investigated.

The third chapter examines individual components of the Armenian startup ecosystem, offering an insightful evaluation of its present maturity. This chapter analyzes the developmental status of Armenia's venture capital sector, investigating the efficacy of investment transactions bolstered by state co-financing and the provision of tax incentives. Furthermore, it analyzes the outcomes of a survey conducted among Armenian startup enterprises, pinpointing correlations between identified problems and identifying key factors influencing the operation of startup companies.

The dissertation's analyses and observations have yielded several **scientific novelties**, including:

- Following an extensive analysis of the Armenian startup ecosystem, it was identified that the ecosystem currently stands at its nascent (M1) level, in a four-level maturity model. An assessment was conducted to explore the potential ways for advancing of the ecosystem to the next level of maturity.
- Based on calculations, it has been established that the involvement of the government together with foreign venture funds in investment transactions by providing a co-financing and tax incentives to venture-backed startup companies, is justified. Through this analysis, the optimal percentage of state and private venture fund participation has been determined, guaranteeing both robust profitability and non-financial benefits in the long term.
- After analyzing survey data obtained from startups in Armenia, we pinpointed the primary obstacles according to key areas of the ecosystem that hinder the growth of both startups and the overall ecosystem.
- Based on survey data, a correlation and factor analysis were performed which revealed significant correlations among various problems and helped to identify the key factors influencing startup development. By employing factor analysis, the primary factors affecting startup companies were pinpointed and categorized.